Թ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904—ՎԱՌՆԱ — ԹԻՒ 76

# ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 6 «
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . . 7 Ֆր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50 Տօլար «
ԳԻՆ ՀԱՏԻԿ
Ծանուցման տողը
20 սանթիմ

ՀԱՍՑԷ
Rédaction du journal
"Iravounk"
VARNA (Bulgarie)
Редакция
на вѣстникъ
"Иравункъ"
ВАРНА

Գրութիւնք ետ չեն տրուիր

## ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՊԱՐՏՔԸ

Հայութեան վրայ ծանրացող և անոր գոյութեան սպառնացող ահեղ վտանգը՝ որ կար անցեալին մէջ եւ կայ այսօր առաւել քան երբէք սարսափազդեցիկ, կարծես դադրած է, գէթ արտասահմանի մէջ, շատերու մտքին վրայ այն ազդեցութիւնը ներգործելէ ինչ որ տասնեակ տարիներ առաջ կընէր։ Ի՞նչու այս անտարբերութիւնը, ի՞նչու զգայնութեան այս պակասը. միթէ կարելի՞ է մտածել որ վշտերու ծանրութիւնը եւ աղէտաբեր լուրերու յաճախանքը արտասահմանի հայութեան մէկ կարեւոր մասը զգայազիրկ ըրած ըլլայ։ Տիրող անտարբերութիւնը այդ կերպով բացատրել մեզ շատ անբնական կը թուի։ Ըստ մեզ այդ անտարբերութեան իրական պատճառը կը կայանայ այն անհասկացողութեան մէջ զոր ցոյց կուտան նոյն իսկ ազգին վիշտերը ամոքելու ծանր գործին նուիրուած խումբերը կամ կուսակցութիւնները։ Թէ՛ սկիզբէն ի վեր ձեռնպահ մնացող եւ թէ քիչ տարիներ առաջ իբրեւ յեղափոխական կամ ազգային գործիչ ինքզինքնին ահեղ վտանգներու ու ծանր զոհողութիւններու ենթարկող շատ ու խիստ շատ ազգայիններու այսօրուան մեկուսացած վիճակը առով կը բացատրուի, այսինքն սխրող անհասկացողութեամբ, որ ամանց վրայ տեսակ մը յուսահատութիւն ձգած և մէկ մասն ալ անըղձայութեան մօտեցող անտարբերութեան ենթարկած է։

Այդ ճշմարտութեան համոզուելու համար կը բաւէ անոնց մօտենալ ու հարց ու փորձով թափանցել իրենց ներքին մըտածումներուն։

Բայց առով հանդերձ մենք բնաւ չենք կարող արդարացնել անոնց մեկուսացումը ու այսօրուան անտարբեր վիճակը, ինչ որ ալ ըլլայ իրենց տալիք բացատրութիւնը։ Ո՛չ արդարացում չկայ անոնց։

Երբ ամէն հայու համար անհրաժեշտ պէտք նկատուած է մեր ազգային ներկայ վիճակին դարմանումին աշխատիլ. այդ աշխատանքը ամէն հայու կողմէ անխտիր պէտք է ի գործ դրուի։ Մէկ կամ մէկ քանի խումբերու գործունէութեան եղանակը դատապարտելի կամ սխալ գտնելով, ծալապատիկ անգործ նստիլ ոճիր է այս պարագային։

Հրապարակի վրայ քանի մը կուսակցութիւններ արդէն գոյութիւն ունին իրենց գործունէութեան ուրոյն եղանակներովը ամէն պարտաճանաչ հայ պարտաւոր է այդ եղանակներէ օգտակարագոյնը, աւելի նպատակայարմարը ընտրել եւ իր բաժինըստանձնել անոր մէջ, եթէ նոյն իսկ նկատէ թէ գործունէութեան այդ եղանակին վարիչներէ ոմանք յայտնի կեղծաւորներ եւ չահադէտներ են. որովհետեւ այս նկատումը չէ կարող արդարացնել այդ նպատակայարմար գործունէութեան եղանակին լքումը, այլ ընդհակառակը պէտք է անոր շուրջ աւելի համախմբուիլ ի սէր Գործին, ու մաքրել զայն իր ապիկար կամ կեղծաւոր ու շահադէտ վարիչներէն, մէկ խօսքով մաքրագործել և միանգամայն ուժովցնել։ Նոյնպէս եթէ գործունէութեան եղանակներէ յարմարագոյնին մէջ տակաւին թերութիւններ կը նշմարուին կամ բարեփոխութեան հարկ տեսնուի, կրկին պէտք է համախմբուիլ անոր շուրջ եւ բարեփոխել ու սրբագրել։

Բօնսթանցա Վ.

---

## ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

### Բ

Անցեալ անգամ չեշտեցինք թէ ի՛նչպէս մեր ազգային վարժարաններուն առաջին պարտականութիւնն է պատրաստել հայ մանկութիւնը այն կատղի մրցումին որ կը տիրէ անտեսագիտական աշխարհին մէջ։ Մեր դպրոցները՝ փոքրիկներէն մինչեւ մեծերը՝ այն աստիճան կղզիացած են վաճառականական և ճարտարարուեստական կեանքէն որ մեր ուսումնասարաններուն եւ պատկաններուն մեծամասնութիւնը կանուխէն ինքզինքը դատապարտուած կզգայ դասարանի մը, խմբագրատան մը կամ գըրասենեակի մը ուր կը գտնեն անձուկ և հեղձուցիչ մթնոլորտ մը, որովհետեւ յաճախ ոչ թէ կոչումի սրբազան հրաւէրէն համոզուած՝ այլ անգութ հարկէն մղուած կը մտնեն հոն։ Ուսկէ՞ց կուգայ նախաձեռնակ ըլլալու այս անկարողութիւնը։ Ինչո՞ւ գրականութեան եւ գիտութեանց բոլոր նրբութիւններովը թեքուած միտք մը գործնականէն օտարացած ըլլայ, ամէն տեղ գործ և արգիւնք չստեղծէ։ Ոչ միայն մեր անյաջողութիւնները կապ ունին մեր կրթական թերութիւններուն հետ՝ այլ նաեւ այն բոլոր գծուծ խաչագողութիւնները, այն բոլոր մակաբուծութիւնները որ այլ և այլ նուիրական տարազներու և անուններու տակ ծպտած՝ ազգին քսակը և փորկը կը կողոպտեն։

Երկու որոշ պատճառներ կան որով մեր կրթութիւնը թէ Թուրքիոյ և թէ Պուլկարիոյ մէջ այսպիսի վհատեցուցիչ կացութիւն մը յառաջ կը բերէ։ Մին մեր մէջ պաշտուած կրթական իտէալը իսկ միւսը՝ մեր կրթական միջավայրը, Որովհետեւ պուլկարահայ կրթութիւնը Պոլսէն կառնէ իր մասուր ծնունդը, սնունդը և ներշնչութիւնը՝ պիտի բաւէ մեզ. չահագրգռող տխուր երեւոյթները միայն Թուրքիոյ մէջ բացատրել։

Թրքահայ կրթութեան իտէալը ընդհանրապէս շատ նեղ և մակերեւութային եղած է։ Ապրելով երկրի մը մէջ ուր խօսքը ամէն ինչ է և խորհուրդը գրեթէ ոչինչ՝ մեր մտքին բոլոր թափովը նետուեր ենք գեղեցիկ դպրութեան վրայ։ Նորավէպ և ճամբորդութեան նկարագրութիւն, երգիծաբանական և նորէն նորավէպ, բիւր պատկերներ Պոլսահայ և երկու հատ ալ գաւառական կեանքէ, կարճ ու կլոր բանաստեղծութիւն մը որ հոտ ունի և համ չունի և հոս ու հոն ալ խրատական առաջնորդող մը որուն մէջ րսուած ճշմարտութիւնները՝ համեստ մանուշակներու պէս հոկայ գեղեցկաբանութիւններու ստուերին տակ կը սիրեն փթթիլ անտեսօրէն.— ահա ինչ է եղեր մեր կենսունակ մտաւորականութեան արտադրումը։

Գրականութիւնը որ բոլոր քաղաքակրթուած ազգերուն դէմքին իրական գոյնը, ներքին եռուզեռ կեանքին ցոլացումը կը կազմէ՝ եղած է մեր մէջ՝ իր լաւագոյն ձեւին մէջ՝ փոխառութիւն կամ հետեւողութիւն, իսկ իր յոռեգոյն ձեւին մէջ՝ առատօրէն գործածուած չպար մը որ կ՚սպառնայ վար թափիլ։ Շատ մը մեծահատոր վէպեր թարգմաներ ենք։ Բայց յաջողուած վէպ մը անգամ չենք կարողացեր գրել։ Մեր հատուկտոր քերթուածներուն և արձակ գրուածքներուն մէջ փորձեր ենք բոլոր դպրոցները դասականէն սկսեալ մինչեւ վերջին տէքատանը։ Բայց մեր երկրին ու ազգին ոգւոյն համեմատ դպրոց մը հիմնել իսկ մեր մտքէն չէ անցեր։ Շաղուեցինք ու թրեցինք աշխարհաբարը զոյն կակղցուցինք, նրբացուցինք և ձուլթի պէս առաձգական ըրինք. բայց ո՞ւր է անդրիագործը որ անկեց արձան մը կերտէ կամ բրուտը որ գէթ ճաշակաւոր անօթ մը հանէ։ Դեռ չստեղծեցինք բան մը արուեստանոցէն դուրս, արուեստէն վեր եւ մօտէկ էն հեռի։ Զարմանալի չէ՞ որ Զօպանեանի և ընկերներու պէս յուսալից երիտասարդներ անգամ իրենց հասուն եւ կորովի

